
Մենակատար ջութակահար՝ Ռուբեն Կոսեմյան

Կանադայում երկար տարիներ բնակվող հայտնի ջութակահար, մենակատար, մանկավարժ Ռուբեն Կոսեմյանի անունը հայտնի է Եվրոպայում, Ռուսաստանում, Վրաստանում, Իրանից մինչև Մեքսիկա, Թայվան, Մալազիա... Որպես մենակատար նա հանդես է գալիս տարբեր նվագախմբերի հետ: Եվ որտեղ էլ գործում է՝ բարձրացնում է հայ մշակույթը: Եվրոպացի, ռուս հռչակավոր կոմպոզիտորների ստեղծագործությունների կողքին նրա կատարմամբ հնչում են հայ կոմպոզիտորների գործերը, որոնք արվեստագետի մեկնաբանությամբ աշխարհին ու գալիք սերունդներին հասցնելու են նաև հայ քաղաքակրթության լույսը որպես համամարդկային արժեք:

- Ազգայինը բազմաթիվ պայմաններից մեկն է ստեղծագործությունը համամարդկային շարքին դասելու համար, - ասում է երաժիշտը: Ու սա Ռուբենի ստեղծագործական կյանքի բանաձևն է:

Նշենք, որ Ռուբեն Կոսեմյանն իր ստեղծագործական կյանքի ուղին սկսել է ինը տարեկանից՝ ելույթներ ունենալով միջազգային հեղինակավոր բեմերում: Չորս տարեկանում երաժշտության առաջին դասերն ստացել է հորից՝ ալտահար, մենակատար, սիմֆոնիկ նվագախմբերի կոնցերտմայստեր, մանկավարժ, ՀՀ վաստակավոր արտիստ Ալեքսանդր Կոսեմյանից. 1990-ից նա եղել է Կոմիտասի անվան լարային քառյակի ալտահարը:

Երաժշտական աշխարհում նրան իմաստուն ու ազնվական ալտ են անվանում. արվեստագետ, ով սրբազան երկյուղածությամբ է մոտենում հայ մշակույթի գանձերին:



Ռուբեն Կոսեմյանը հայրիկից ստացավ նաև մեր ազգային մշակույթը գնահատելու առաջին դասերը: Դրա վկայությունն են հայ մշակույթը պահպանելու և աշխարհով մեկ տարածելուն ուղղված նրա ջանքերը: Ջութակահարն անցած տարիների ընթացքում հեղինակել է բազմաթիվ ճայնասկավառակներ, որտեղ ի թիվս եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործությունների՝ միջազգային ունկնդրին է ներկայացնում հայ մշակույթի անգին մարգարիտները:

Ռուբեն Կոսեմյանն իր ստեղծագործական կյանքի ընթացքում կատարել է տարբեր դարաշրջանների կոմպոզիտորների 72 փոխադրություն՝ սկսած Սկարլատտիից մինչև Առնո Բաբաջանյան:

Արվեստագետի համար այս տարին ևս անցնում է ստեղծագործական որոնումների մեջ: Ռուբեն Կոսեմյանն Իսպանիայում լույս է ընծայել նոր ճայնասկավառակ, որտեղ տեղ են գտել Յոհաննես Բրամսի ստեղծագործությունները: Առաջիկայում տպագրվելու են նաև Սերգեյ Պրոկոֆևի «Վեց պիես»-ները՝ Ռուբեն Կոսեմյանի փոխադրությամբ, որի աշխատանքներն իրականացնելու ընթացքում հետաքրքիր համագործակցություն է ունեցել կոմպոզիտորի թոռան հետ:

Ռուբեն Կոսեմյանը հաճախ է լինում հայրենիքում, որպեսզի ամեն ջանք ներդնի արվեստի մեծ աշխարհի ոտք դնող հայ երեխաներին օգտակար լինելու, նրանց վարպետության դասեր տալու համար:

Աշխարհի որ երկրում էլ ապրի ու ստեղծագործի Ռուբեն Կոսեմյանը, հոգով ու մտքով միշտ հայրենիքում է: Նա անտարբեր չէր նաև 2020-ին Արցախի ու Հայաստանի դեմ սանձազերծված պատերազմի նկատմամբ, երբ զոհվեցին հազարավոր հայ երիտասարդներ:

ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ
Լրագրող

Նյութը ներկայացվում է կրճատումներով
«Հայ զինվոր» # 6 (1471) 15-21 փետրվար 2023 թ.
հանդեսից, էջ 18-19